ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 սեպտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

122
(2788)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇԻՆԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՏԱՐԱՓ՝ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Քաղաքը փոշու մեջ է, իսկ իշխանության վերնախավը քարոզարշավ է անում: 2018 թվականից մինչեւ 2023 թվականը Հայաստանում ավելացել են շինարարության ծավալները: 2018 թվականի հաշվարկով՝ Հայաստանի ամբողջ տարածքում շինարարության ծավալները կազմել են 435 մլն 803 հազար դրամ: 2022 թականին այդ թիվը աճել է՝դառնալով 541 մլն 110 հազար դրամ: Այսինքն՝նորելուկ իշխանությունները քաղաքացիներին իբրեւ թե լավություն անելու եւ նրանց աչքը մտնելու համար աջ ու ձախ շինթույլտվություններ են բաշխել: Ամեն առիթով պարծենում են, թե ստեղծել են աշխատատեղեր, սակայն այդ աշխատատեղերը վնասում են հա՛մ բնությունը, հա՛մ մարդկանց առողջությունը: Հեղափոխական իշխանությունները Երեւանում 2018 թվականից մինչեւ 2023 թվականը թվով 157 շինթույլտվություն են տվել 100-ից ավելի կազմակերպությունների: Այս շինթույլտվությունները տրված են հիմնականում բնակելի շենքեր կառուցելու համար: Սա՝ այն դեպքում, երբ Հայաստանում բնակչության կեսն ապրում է Երեւանում. Հայաստանում բնակչությունը խիստ ուրբանիզացված է: Այսինքն՝ գյուղերը դատարկվում են, իսկ քաղաքում ավելանում են թանկարժեք էլիտար շենքերը, որոնք վաճառվում են անասելի թանկ գներով: Հիշենք նաեւ այն փաստը, որ Մարությանի ղեկավարության օրոք, կառուցապատումների թույլտվությունների դիմաց, ձեռք էին բերվել աղբատար մեքենաներ: Կասկածելի է, թե նրանից հետո էլ ինչի դիմաց են իշխանությունները ծախել Երեւան քաղաքի մայթերն ու ազատ տարածությունները: Սա դեռ բավարար չէ. Երեւանի քաղաքապետարանը նախընտրական թոհուբոհում արագ-արագ քանդում է քաղաքացիների իբրեւ անօրինական շինությունները՝ առանց նրանց այդ մասին ծանուցելու: Այսինքն՝ ով ըմբոստ է, ընդդիմախոս Փաշինյանի իշխանությանը, նրանց շինարարությունները քանդվում են ամենատարբեր անհեթեթ հիմնավորումներով, իսկ ովքեր քծնում են, ամենաանօրինական շինարարություններն են շարունակում: Երեւանում կա օդի աղտոտվածության լուրջ խնդիր եւ կուտակված փոշու ամպեր, սակայն եւ՛ կառավարությունն է լռում, եւ՛ Երեւանի քաղաքապետարանն ու բնապահպանները: Վերոնշյալ շինթույլտվությունները տրվել են այնպիսի խոշոր ընկերությունների, ինչպիսին է «Գրանդ տոբակո» ՍՊԸ-ն, որը պատկանում է Վարդանյան եղբայրներին: Հիշեցնենք, որ «Գրանդ տոբակո» ընկերությունը դեռ այս տարվա ապրիլին ազատվել է 8.6 մլրդ դրամի մաքսատուրքից: Ըստ նախագծի հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել ծխախոտի արտադրության համար: Մյուս կազմակերպությունը «Միկշին» ՍՊԸ-ն է, որը 2018 թվականին, Կառավարության որոշմամբ, պատրաստվում էր լեռնադահուկային համալիր կառուցել Լոռու մարզում, սակայն 2019 թվականին այդ որոշումը համարվեց ուժը կորցրած, եւ ծրագիրը չեղարկվեց: «Միկշին» ՍՊԸ-ն պատկանում է ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վահան Հարությունյանի եղբորը՝ Տիգրան Հարությունյանին, ԴԱՀԿ ծառայության նախկին պետ Միհրան Պողոսյանի քեռու՝ Միխաիլ Հարությունյանի որդուն: Հաջորդիվ կներկայացնենք, թե էլ որ ընկերություններին են Երեւանում շինթույլտվություններ տրված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանի քրեական գործով Ազգային անվտանգության ծառայություն են հրավիրվել Պն նախկին նախարար, փոխնախարարներ ու վարչության պետեր, որոնք հարցաքննվել ու առերեսվել են Վաչագան Ղազարյանի հետ: Ավելին՝ գրել էինք, որ Ազգային անվտանգության ծառայությունը կալանավորել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության, զորքերի բնակավորման եւ կոմունալ շահագործման վարչության նախկին պետ, գնդապետ Արմեն Սարգսյանին: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս ԱԱԾ-ն կալանավորել է Վաչագան Ղազարյանի քրեական գործով: Ի դեպ, նա սպարապետ Վազգեն Սարգսյանի կուրսեցին է: Հիշեցնենք, որ Վաչագան Ղազարյանը 5 տարի առաջ՝ հունիսի 25-ին, ձերբակալվել էր բանկից դուրս գալիս: Նրա ճամպրուկում հայտնաբերվել էր 120 000 դոլար եւ 436 մլն դրամ: Ինչպես հայտնի է, ԱԱԾ-ում քրեական վարույթ է առկա ՊՆ-ի հողատարածքների ապօրինի վաճառքի մասով, եւ, ահա, այս քրեական վարույթի շրջանակներում էլ կալանավորել են Վաչագան Ղազարյանին:

«Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած ծնողների գործով: Մասնավորապես, իրավապահ մարմինները բացահայտել են, որ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսեւորած Աննա Արեւշատյանն իր երեխայի նկատմամբ այդպես է վարվել, նկարել ու տեսանյութը ուղարկել է իր ամուսնու՝ Թաթուլ Մադաթյանի հետ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի նույն խցում պատիժը կրող մի տղամարդու: Իրավապահները բացահայտել են, որ Աննա Արեւշատյանը կապի մեջ է եղել «Նուբարաշեն» ՔԿՀ-ում իր ամուսնու հետ նույն խցում պատիժ կրող մի տղամարդու հետ, որն էլ նրան շահագրգռել է երեխայի հետ այդպես վարվել, նկարել ու ուղարկել իրեն, ինչն էլ Աննա Արեւշատյանն իրականացրել է: Հիշեցնենք, որ Գավառցի երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած մոր՝ Աննա Արեւշատյանի նկատմամբ հարուցված քրեական գործով իրավապահները մտել են Նուբարաշենի բանտ ու խուզարկություն իրականացրել: Բանն այն է, որ Աննա Արեւշատյանի ամուսինը՝ Թաթուլ Մադաթյանը, կալանավորված է սեփական երեխաների նկատմամբ սեռական բռնություն իրականացնելու համար եւ այս պահին կալանքը կրում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ հենց այս դեպքով էլ Նուբարաշենի բանտում խուզարկություն է իրականացվել, հատկապես՝ սեռական բռնություն իրականացրած հոր՝ Թաթուլ Մադաթյանի խցում: Հիշեցնենք, որ քրեական վարույթով պարզվել է, որ Աննա Արեւշատյանն իր 12-ամյա դստեր մասնակցությամբ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու, այն հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով այլ անձանց սեռական կարիքները բավարարելու նպատակով իրացնելու դիտավորությամբ, անչափահաս դստեր նկատմամբ դաժան վերաբերմունք դրսեւորելով, ստեղծել եւ իրացրել է մանկական պոռնոգրաֆիա: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծման ժամանակ անչափահաս դստերը պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, նրա նկատմամբ բռնություն գործադրելով՝ կատարել է սեքսուալ բնույթի գործողություններ, իսկ պոռնկագրական բնույթի նյութի պատրաստմանը ներգրավել է նաեւ իր 12 տարին չլրացած երկու աղջիկ երեխաներին: Ծնողները կալանավորված են:

Հայաստանում նվազել են հացի արտադրության ծավալները: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ այս տարվա հունվար-հուլիս ամիսներին արտադրվել է 128 հազար 167.2 տոննա հաց: Այս թիվը, 2022թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, պակաս է 2.1%-ով: Սակայն 3.1%-ով ավելացել է ալյուրի արտադրությունը. 7 ամիսներին արտադրվել է 89 հազար 827.1 տոննա ալյուր, իսկ 2022 թ-ի նույն ժամանակահատվածում՝ 87 հազար 108.2 տոննա: Այս թվերին զուգահեռ ավելացել է մակարոնեղենի եւ ձավարի արտադրությունը. այս տարվա հունվար-հուլիսին 1.1%-ով էլ ավելացել է մակարոնեղենի արտադրությունը, ձավարեղենի արտադրության ծավալները նույնպես ավելացել են: Հունվար-հուլիսին արտադրվել է 902.2 տոննա ձավարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.6%-ով: Սա հետաքրքիր վիճակագրություն է այն իմաստով, որ Ռուսաստանից եւ Ուկրաինայից Հայաստան եկած քաղաքացիները թեեւ բնակչության վիճակագրությունը ՀՀ-ում փոխել են, բայց հացի արտադրությունը նվազել է, քանի որ նրանք հայերի նման շատ հաց չեն ուտում:

ԶՐՈՒՅՑ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ՝ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսիայից ուղարկված հումանիտար բեռները երեկվանից Կոռնիձորում են. Ադրբեջանը թույլ չի տալիս, որպեսզի դրանք մտնեն Արցախ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս մասին ասաց Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը:

Քաղաքապետի հետ զրուցել ենք նաեւ Արցախում ստեղծված իրավիճակի եւ հանրության տրամադրվածության մասին: Վերջինիս փոխանցմամբ՝ այս պահին Արցախում սննդի պակասն է լուրջ խնդիր, ինչի պատճառով թերսնուցման դեպքեր են լինում:

-Արցախ ոչինչ չի հասել, ճանապարհին կանգնած են: Թույլ չեն տալիս, որ այդ հումանիտար օգնությունը հասնի Արցախ:

-Հիմա Կոռնիձորի՞ հատվածում են դեռ բեռները:

-Այո՛:

-Իսկ Ֆրանսիայի պատվիրակությունը դեռ այնտե՞ղ է, թե՞ վերադարձել են:

-Ես երեկվանից տեղեկություն չունեմ, թե ինչ է կատարվում այնտեղ, այնպես որ, այժմ չեմ կարող պատասխանել:

-Դուք հասցրե՞լ եք խոսել Փարիզի քաղաքապետի հետ, մտքեր, մտահոգություններ ու կարծիքներ կիսել նրա հետ՝ իրավիճակի հետ կապված:

-Ո՛չ, չեմ խոսել:

-Պարոն Սարգսյան, իսկ իրավիճակն ինչպե՞ս է այդտեղ, մարդկանց հոգեբանական վիճակն ինչպիսի՞ն է:

-Ուտելիքի, հացի խնդիր կա. սրանք առաջնային են, բայց նաեւ կան խնդիրներ, որոնք սրանցից են բխում: Այս իրավիճակում միանշանակ դժվար է, բայց մարդիկ փորձում են գոյատեւել:

-Պարոն Սարգսյան, այսօր սեպտեմբերի 1-ն է, դպրոցներում վերսկսվում են դասերը: Արցախում իրավիճակն ինչպիսի՞ն է: Դասերն ամբողջակա՞ն են լինելու, թե՞ կրճատվել են:

-Իհարկե, կրճատվել են. 35 որպե է լինելու մեկ դասաժամը:

-Գրենական պիտույքներ ծնողնե՞րն են ձեռք բերելու, թե՞ դպրոցը կամ քաղաքապետարանն է տրամադրելու իր միջոցներից:

-Կախված պահից՝ ով ունի, ով չունի: Այնպես չէ, որ այստեղ վաճառում են այդ ամենը, մեկը մյուսով, մեկը մյուսին օգնելով՝ պետք է հարմարվեն:

Հիշեցնենք, որ օգոստոսի 30-ին Ֆրանսիայի քաղաքներից Արցախին ուղարկված հումանիտար բեռներով 10 բեռնատար մեքենաներն առավոտյան Երեւանից շարժվել են դեպի Լաչինի միջանցքի սկզբնամաս՝ Կոռնիձորի անցակետ: Հումանիտար օգնությունը հատկացրել են Փարիզ քաղաքը, Իլ դը Ֆրանս, Օվերն-Ռոն-Ալպ, Օ դը Ֆրանս, Օքսիտանիա, Լուարի երկիր ռեգիոնները: Ավելի ուշ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Գորիսում ԼՂ ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանի եւ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հետ դիմավորեց Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոյին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամներին:

Ֆրանսիայի հումանիտար օգնությամբ առաջին բեռնատարը Հայաստանի ուղարկած օգնությամբ բեռնատարների շարասյանն էր միացել օգոստոսի 9-ին: Ավելի վաղ Հայաստանի կառավարությունը 361 տոննա հումանիտար օգնություն էր ուղարկել Լեռնային Ղարաբաղ, սակայն բեռնատարների շարասյունը հուլիսի 26-ից կանգնած է Լաչինի միջանցքի մուտքի մոտ, քանի որ Ադրբեջանն արգելում է դրանց մուտքը Լեռնային Ղարաբաղ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՑԱԽ

ՀԱՎԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ⇨

Արցախում ներքաղաքական կյանքը գերլարված է:

Երեկ նախագահ Արայիկ Հարությունյանը նշեց պաշտոնապես հրաժարական տալու մասին: Դրանից երեք օր հետո Ազգային ժողովը կընդունի նախագահի հրաժարականի դիմումը, իսկ մեկ շաբաթվա ընթացքում նիստ կհրավիրի՝ նոր նախագահ ընտրելու օրակարգով: Արցախի Ազգային ժողովի խմբակցություններից յուրաքանչյուրն իրավունք ունի իր թեկնածուն առաջադրելու: Ինչպես Արցախի մեր աղբյուրներն են փոխանցում, Արցախի ԱԺ պատգամավորները պատրաստվում են այսօր կամ վաղը քննարկում անել թեկնածուի հարցով, բայց նախնական ԱԺ բոլոր խմբակցությունները մտադիր են մեկ միասնական թեկնածու առաջադրել:

Այս պահին մի քանի թեկնածուների անուններ են շրջանառվում, այդ թվում՝ ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի եւ նորանշանակ պետնախարար Սամվել Շահրամանյանի, սակայն վերջնական որոշում դեռ չկա այս մասով:

Թե ով կդառնա Արցախի նոր նախագահը, հայտնի կդառնա առաջիկա շաբաթվա ընթացքում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ



ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ ԲԱՑՎԻ

Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող Լաչինի միջանցքի բացումը կարող է տեղի ունենալ առաջիկա օրերին: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկանում է Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի հայտարարությունից:

Հաջիեւը նշել է, որ Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհի բացումն իր արտացոլումն է գտել համապատասխան հայտարարություններում: Ըստ նրա՝ Հայաստանի ղեկավարությունը Բրյուսելում կայացած հանդիպումների ժամանակ ընդունել է դրա օգտագործման հնարավորությունը:

«Որպես այդ գործընթացի հերթական բաղադրիչ կարող է նախատեսվել Լաչինի ճանապարհի բացումը առաջիկա օրերին, այսինքն՝ որոշակի պայմանական ժամկետներում: Լաչինի ճանապարհի բացման հարցում շատ կարեւոր է Ադրբեջանի տարածքային ամբողջականության գործոնը: Միեւնույն ժամանակ, դա պետք է տեղի ունենա մեր երկրի օրենքների եւ սահմանային վերահսկողությանը վերաբերող համապատասխան օրենքների, ինչպես նաեւ մաքսային ռեժիմի կանոնների պահպանման պայմանով»,- նշել է Հաջիեւը:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ

Իշխանական պատգամավորների համար սկսվում են երանելի ժամանակները. առաջիկա ամիսներին շրջագայությունների իսկական բում է սպասվում նրանց: ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանը որոշել է պետբյուջեի հաշվին շրջագայություններ շռայլել պատգամավորներին, ընդ որում՝ Սիմոնյանը բարեհաճ է գտնվել թե՛ իշխանականների, թե՛ ընդդիմադիրների նկատմամբ. նրանք ողջ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներին շրջագայությունների մեջ կլինեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ աշնան առաջին ամիսն ակտիվ գործուղումներով կսկսի ՔՊ-ական Արմեն Խաչատրյանը. վերջինս սեպտեմբերի 4-5-ը կգործուղվի Մինսկ՝ ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների արտաքին հարաբերությունների, պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովների նախագահների խորհրդակցությանը մասնակցելու համար, իսկ սեպտեմբերի 6-ին կմեկնի Բելառուս՝ Բրեստ, «Փոխգործակցություն-2023» ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի համատեղ զորավարժություններին խորհրդարանական մոնիթորինգ իրականացնելու համար: Պետբյուջեի հաշվին գործուղման կգնա նաեւ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը: Նա սեպտեմբերի 10-14-ը Փարիզում կմասնակցի ԵՏԽՎ քաղաքական եւ ժողովրդավարության հարցերի եւ Մոնիտորինգի հանձնաժողովների նիստերին: Ընդդիմադիրները նույնպես հետ չեն մնա այս գործուղումների շռայլություններից: Սեպտեմբերի 14-18-ը ՔՊ-ական Հասմիկ Հակոբյանի հետ Վիետնամ կգործուղվի նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանը. նրանք Հանոյ քաղաքում կմասնակցեն Միջխորհրդարանական միության երիտասարդ պատգամավորների 9-րդ գլոբալ համաժողովին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին մասնակցելու համար սեպտեմբերի 19-25-ը Նյու Յորք կմեկնեն Նարեկ Ջեյնալյանը, Լուսինե Բաղալյանը եւ Արփինե Դավոյանը: ՔՊ-ականների թանկարժեք շրջագայությունները կշարունակվեն նաեւ հոկտեմբերին: Հոկտեմբերի 5-10-ը ԱԺ պատվիրակություն կմեկնի Կոպենհագեն՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի տարեկան նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու համար: Պատվիրակության կազմում կլինեն ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, ԱԺ պատգամավորներ Վահագն Ալեքսանյանը եւ Արուսյակ Ջուլհակյանը: Արմեն Գեւորգյանը 2023 թվականի հոկտեմբերի 22-27-ը Ստրասբուրգում կլինի: Շրջագայությունների շքերթը եզրափակում է Մարիա Կարապետյանը. նա «Այլանս հանուն պատասխանատու քաղաքացիության» նորաստեղծ նախաձեռնության առաջին համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 2-ը կգործուղվի Լոնդոն: Շրջագայությունների այս մեծ ցանկից արդեն հասկանալի է, որ ՔՊ-ականները «մեծ ախորժակով» են սկսում աշունը, բայց թե մեր պետությանը ինչ օգուտ են տալիս ՔՊ-ականների այս շռայլ ու թանկարժեք շրջագայությունները, ժամանակը ցույց կտա:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄԸ

Վերջին օրերին «Ժողովուրդ» օրաթերթը քաղաքացիներից պարբերաբար ահազանգեր է ստանում, որ սեպտեմբերի մեկից առաջ դպրոցներում գրքեր չկան: ԿԳՄՍ նախարարությունը դեռ անցած տարի մրցույթ էր հայտարարել նոր դասագրքերի տպագրության համար, սակայն մրցույթը մի քանի անգամ հետաձգվել է տարբեր պատճառներով: Գիտելիքի օրվան ընդառաջ՝ դպրոցներում ծնողական ժողովներ են անում, մարզերում եւ Երեւանում տնօրենների խորհրդի նիստեր են հրավիրվում:

Դպրոցներում դասագրքերի պակասը նախկինում եւս եղել է, սակայն դրանք լրացվել են մեկ շաբաթ հետո, իսկ այժմ դպրոցներում նոր՝ փոփոխված չափորոշիչներին համապատասխան գրքեր չկան, նախկին գրքերն էլ տպագրված են 6-7 տարի առաջ: Անելանելի իրավիճակում հայտնված ուսուցիչները մինչ այս անցել են համապատասխան վերապատրաստում՝ նոր չափորոշիչներով դասավանդելու համար: Նախարարությունը կազմել է նոր չափորոշիչներ, ուսուցչի նոր ձեռնարկներ, սակայն դասագրքեր այդպես էլ չի հասցրել վերջնական կազմել:

«Ժողովուրդ» օրաթերթը շրջել է գրախանութներում եւ արձանագրել, որ 1-ից 4-րդ դասարանի գրքերը 2023 թվականի հրատարակությամբ վաճառվում են գրախանութներում:

Նախարարությունից հորդորել են դասագրքերը գնել, դրանք վաճառքի կա գրախանութներում: «Ժողովուրդ» օրաթերթը շրջել է գրախանութներում եւ ֆիքսել, որ 1, 2, 3, 4-րդ դասարանի դասագրքերը երեկվանից վաճառվում են գրախանութներում՝ 1700, 2000, 2500 դրամ արժողությամբ, սակայն դա դեռ մի մասը: 2023 թվականի հրատարակված գրքերը բաղկացած են 4 մասից: Այսինքն՝ ծնողները 2-3 ամիսը մեկ անգամ պետք է գիրք գնեն: Ստացվում է՝ եթե նախկինում ամբողջ դասագրքերի համար ծնողները կվճարեին 5000 դրամ, ապա այժմ մեկ գիրքը կարող է այդքան արժենալ:

Նախարարությունն այս իրավիճակը թողնում է անպատասխան:

Հիշեցնենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հայրենի նախարարությունը չի կարողացել տպագրել դպրոցական նոր դասագրքերը, ու ԿԳՄՍՆ-ից դպրոցների տնօրեններին հանձնարարել են դրանց էլեկտրոնային տարբերակներից թեմաները տպել եւ տալ աշակերտներին:

«Դասագրքերի մրցույթը հայտարարվել էր դեռեւս անցյալ տարի, ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է: Մրցույթն ամփոփվել է հունիսի մեկին, եւ ներկայացված հայտերն ուղարկվել են փորձաքննության: Դրական եզրակացություն ստացած դասագրքերը երաշխավորվել են գործածության, ցանկը հաստատվել է նախարարի հրամանով: Դրական եզրակացություն ստացած եւ նախարարի հրամանով հաստատված նոր դասագրքերն այժմ տպագրության փուլում են»,- հայտարարել էր փոխնախարարը:

Իսկ շատ դպրոցականներ սեպտեմբերը կսկսեն առանց գրքերի, քանի որ հին չափորոշիչները փոխված են, նորերն էլ՝ դեռ չմշակված:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԱՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՏԱ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը այսօր հրաժարականի դիմում կներկայացնի: Այս մասին նա անձամբ է հայտնել:

«Արցախի ժողովրդի կողմից Արցախի Հանրապետության նախագահ ընտրվելու արդյունքում 2020թ. մայիսի 21-ին ստանձնել եմ նախագահի լիազորությունները: Հաջորդ իսկ օրվանից անցել եմ Արցախի պաշտպանունակությունն ամրապնդելու, Արցախի սահմանների անառիկությունն ապահովելու գործին: Ցավոք, ընդամենը չորս ամիս անց Ադրբեջանի կողմից սանձազերծվեց 44-օրյա պատերազմը, որն ավարտվեց մեր պարտությամբ: Իհարկե, կարելի է պարտության ողջ մեղավորությունը բարդել Արցախի չորսամյա նախագահի վրա, եւ ես ամենեւին չեմ հրաժարվում պատասխանատվությունից, բայց, հավատացե՛ք, մեզանից յուրաքանչյուրն ուներ պատասխանատվության իր բաժինը, ամեն մեկը՝ իր կարգավիճակի ու կարողությունների չափով: Բոլոր դեպքերում, ես մի քանի անգամ հայտարարել եմ, հիմա հրապարակայնորեն կրկին ներողություն եմ հայցում հայ ժողովրդից՝ մեղավորության իմ բաժնի համար, բայցեւ նորից հավաստիացնում եմ, որ 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում ես ձեռնարկել եմ բոլոր քայլերն իմ ուժերի ու փաստացի լիազորությունների սահմաններում, գուցեեւ ավելին:

Հավատացնում եմ, որ իրավիճակը ոչ պակաս բարդ էր նաեւ 44-օրյա պատերազմից հետո, եւ ստեղծված իրավիճակը պակաս պատասխանատվություն չէր պահանջում: Արցախը կանգնած էր կործանման եզրին, եւ կրկին ներքին կայունությունն ու ամրությունն ապահովելու ծայրահեղ անհրաժեշտություն կար: Թվում էր, թե հետպատերազմյան հոգեճնշող վիճակը եւ հոգեֆիզիոլոգիական ծանրաբեռնվածությունը պետք է հաղթած լինեին ինձ, բայց ես ուժ գտա պատասխանատվություն ստանձնելու նաեւ այդ ժամանակ: Այդ ողջ ընթացքում ես իմ ամբողջ ներուժն ուղղել եմ Արցախում ներքին կայունությունն ամրապնդելուն, այդ պայմաններում ենթադրվող հանցավորության աճը կանխելուն, արցախցիների հայրենադարձությունն ապահովելուն, երկրի սահմանադրական կարգն ու պետականության սյուները կանգուն պահելուն: Այո, որոշ հարցերում հաջողություններ չենք ունեցել, բայց, ընդհանուր առմամբ, ամենակարճ ժամկետում ոչ միայն ուղղել ենք երկրի կորացած մեջքը, այլեւ կյանքը կրկին վերադարձրել որոշակի կայուն հուն:

Գուցե հենց նաեւ դա էր պատճառը, որ ամեն գնով մեզ ոչնչացնելուն, ցեղասպանելուն պատրաստ Ադրբեջանը 2022թ. դեկտեմբերի 12-ից սկսեց Արցախի շրջափակումը, իսկ 2023թ. հունիսի 15-ից՝ նաեւ լիակատար պաշարումը: Դա տեղի ունեցավ նաեւ այն պատճառով, որ, չնայած Արցախի ժողովրդի հանդեպ իրականացվող ամենօրյա սադրանքներին ու բռնաճնշումներին, մեր ժողովուրդը շարունակում էր Արցախը շենացնելու իր սուրբ գործը:

Արդեն գրեթե ինն ամիս է՝ Արցախը գտնվում է ադրբեջանական շրջափակման մեջ, իսկ Արցախի պատանդառված ժողովուրդը ենթարկվում է անթաքույց ցեղասպանության: Այս ընթացքում մենք մեր կարողությունների սահմաններում ձեռնարկել ենք բոլոր հնարավոր միջոցները ստեղծված իրավիճակը աշխարհին ներկայացնելու եւ միջազգային հանրության աջակցությունը ստանալու համար, երկու անգամ հարցը քննարկման առարկա էր դարձել նույնիսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, երկուական անգամներ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրել են Արցախն ապաշրջափակելու վերաբերյալ որոշումներ, բազմաթիվ հայտարարություններ ու կոչեր են հնչել հարյուրավոր միջազգային սուբյեկտների կողմից, սակայն ադրբեջանական ագրեսիվ վարքագիծը որեւէ կերպ չի կանխվել»:

Նշենք, որ, Հարությունյանի խոսքով, այսօր աշխարհում ձեւավորված աշխարհաքաղաքական անկայուն վիճակը, տարածաշրջանային իրադարձություններն ու կանխատեսվող զարգացումները, Արցախում եւ դրա շուրջ տեղի ունեցող երեւույթները, արցախյան ներքաղաքական ու ներհասարակական մթնոլորտն ուղղակիորեն հուշում են, որ առկա է մոտեցումների ու քայլերի փոփոխության, ճկունություն դրսեւորելու անհրաժեշտություն: Նշվածին հասնելու համար Արցախում անհրաժեշտ է հիմնական դերակատարների փոփոխություն՝ սկսած իրենից:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԱՏՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

ԱՀ պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանը երեկ, իր դիմումի համաձայն, ազատվել է պաշտոնից: Այդ մասին նա հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ Արցախի Հանրապետության պետական նախարարի փոփոխության ու նախագահի առաջիկա հրաժարականի մասին լուրերից հետո ինքը եւս ազատվել է պետնախարարի խորհրդականի պաշտոնից:

Ե՞ՐԲ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ

Օգոստոսի 14-ին ԿԽՄԿ Բաքվի պատվիրակության ներկայացուցիչները այցելել են Վագիֆ Խաչատրյանին: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է ԿԽՄԿ Երեւանյան գրասենյակի հաղորդակցման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին: Նա նշել է, որ դա առայժմ վերջին այցն է եղել:

Նշենք, որ Արցախի բնակիչ, 68-ամյա Խաչատրյանն առեւանգվել էր Լաչինի միջանցքից, երբ փորձել էր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ Հայաստան տեղափոխվել բուժման նպատակով:

Օգոստոսի 30-ին Կոռնիձորում Խաչատրյանի դուստրը հանդիպել է Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոյին: Վերջինս խոստացել է զբաղվել Վագիֆ Խաչատրյանի հետ վերադարձի հարցով:

ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ

Ադրբեջանում Ֆրանսիայի դեսպան Անն Բուայոնը կանչվել է Ադրբեջանի ԱԳՆ, որտեղ նրան բողոքի նոտա են հանձնել: Պատճառը Արցախին մարդասիրական օգնություն ուղարկելն է: Այս մասին հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները՝ հղում անելով երկրի ԱԳ նախարարությանը:

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, թե Ֆրանսիան պետք է դադարեցնի միջազգային իրավունքով պաշտպանվող Ադրբեջանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ ուղղված քայլերը, որոնք սպառնում են տարածաշրջանում միջազգային դերակատարների ակտիվ ջանքերով խթանվող կարգավորման փխրուն գործընթացին:

ԺԱՄԱՆԱԿ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ՄԻԵԴ-ը որոշում է կայացրել Ադրբեջանին մինչեւ սեպտեմբերի 7-ը ժամանակ տրամադրել սույն թվականի օգոստոսի 28-ին Լաչինի միջանցքից առեւանգված երեք քաղաքացիական անձանց վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին: Ադրբեջանը պարտավոր է դատարանին տեղեկություններ հայտնել այդ անձանց գտնվելու վայրի, պահման պայմանների, առողջական վիճակի, ստացած բուժօգնության եւ վերադարձի ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԶԱԽԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀՀ գլխավոր դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Երեւանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանի նկատմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ե.Զ.-ն, 2003 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2009 թվականի մարտի 4-ը զբաղեցնելով Երեւանի քաղաքապետի պաշտոնը, առանց իրավական հիմքերի, որոշում է կայացրել «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանն օտարել պետական սեփականություն հանդիսացող՝ «Երիտասարդական պալատ» պետական փակ բաժնետիրական ընկերության՝ Երեւան քաղաքի Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ հողամասը:

Մասնավորապես, 2004 թվականի հունվարի 13-ին Երեւանի Սարալանջ 1 հասցեում գտնվող՝ 24.345.2 քմ մակերեսով անշարժ գույքը «Երիտասարդական պալատ» ՊՓԲ ընկերության սնանկության կառավարչի կողմից վաճառվել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը: Պայմանագրի գինը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոշվել է 506 մլն դրամ: 506 մլն դրամից 90 մլն դրամը նախատեսվել է տրամադրել վերոնշյալ շենքում բնակվող 24 փախստական ընտանիքներին՝ որպես տարածք տրամադրելու հատուցում: Հետագայում՝ 2004 թվականի հուլիսի 13-ին, նշված հատուցման գումարի չափը փոփոխվել է՝ դառնալով 95 մլն դրամ՝ արդեն որպես 30 փախստական ընտանիքներին տարածք տրամադրելու հատուցում:

Նշենք, որ պայմանագրի 7-րդ կետով սահմանվել է, որ անշարժ գույքի սեփականության իրավունքը կհամարվի փոխանցված գնորդին՝ պայմանագրի՝ պետական գրանցում ստանալու պահից (պայմանագիրը պետական գրանցում է ստացել 2004 թվականի հունվարի 27-ին):

«Ե.Զ.-ն 2004 թվականի հունվարի 16-ին՝ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն նոր որոշման ուժի մեջ մտնելուց երեք օր առաջ (19.01.2004 թվականին ուժի մեջ մտած որոշման համաձայն՝ վերոնշյալ հողամասի կադաստրային արժեքը նախկինում գործող 62 մլն 973 հազար 405 դրամից դառնում էր 805 մլն 623 հազար դրամ), պայմանագրի պետական գրանցման բացակայության, անշարժ գույքի սեփականության իրավունքը գնորդին փոխանցված եւ դրանից բխող այլ իրավունքներ, այդ թվում՝ գույքի գնման նախապատվության իրավունքն առաջացած չլինելու պայմաններում, առանց համապատասխան իրավական հիմքերի, կայացրել է ««Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ին պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքն օտարելու մասին» թիվ 35-Ա որոշումը: Այդ որոշմամբ՝ Ե.Զ.-ն «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ին վերապահել է վերոնշյալ հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասի գնման նախապատվության իրավունք՝ վաճառքի գինը սահմանելով տվյալ ժամանակահատվածում գործող կադաստրային արժեքի չափով:

Այնուհետեւ Երեւանի քաղաքապետի՝ 2004 թվականի հունվարի 16-ի թիվ 35-Ա որոշման հիման վրա՝ 2004 թվականի հունվարի 17-ին Երեւան քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Կ.Դ.-ի եւ «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերության տնօրեն Լ.Ա.-ի միջեւ կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ Երեւան քաղաքի Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասը 62 մլն 973 հազար 405 դրամով օտարվել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը:

Այսպիսով, Երեւանի նախկին քաղաքապետ Ե.Զ.-ն, անձնական շահագրգռվածությունից ելնելով, խախտելով օրենսդրական մի շարք պահանջները, 805 մլն 623 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասը 62 մլն 973 հազար 405 դրամով օտարել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը՝ Երեւան համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս:

Դատախազի՝ 2023 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ՝ Ե.Զ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ)», - ասված է հաղորդագրության մեջ:

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»

ԴԱՏԱՐԱՆ ԱՐԳԵԼԵՑ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Գագիկ Պողոսյանի նախագահությամբ, օգոստոսի 31-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում նախորդ տարվա օգոստոսի 14-ին տեղի ունեցած ողբերգական դպայթյունի գործով մեկնարկած նախնական դատական նիստին արգելվեց ԶԼՄ-ներին ուղիղ հեռարձակում իրականացնել: Դատարանը թույլատրեց միայն 10 րոպե տեւողությամբ տեսանկարահանում իրականացնել դատական նիստերի դահլիճում:

Նշենք, որ ամբաստանյալի կարգավիճակում է 3 անձ՝ Վահագն Հովհաննիսյանը, Գարիկ Վարդանյանը եւ Մեր Մարգարյանը: Վահագն Հովհաննիսյանը վարչական հսկողության տակ է, Գարիկ Վարդանյանի նկատմամբ բացակայելու արգելք է սահմանվել, Մեր Մարգարյանի նկատմամբ՝ գրավ է կիրառվել:

Ըստ մեղադրանքի՝ Վահագն Հովհաննիսյանը, «Երեւանի պահածոների գործարան» ՓԲ ընկերության տնօրեն Իրինա Էդուարդի Մադաթովայի հետ 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ «Առեւտրի իրականացման վայրի առեւտրի օբյեկտների, վաճառատեղերի եւ պահեստների տրամադրման» պայմանագրով առեւտրի կենտրոնում վարձակալելով ընկերության՝ Երեւան քաղաքի Արշակունյաց 15 հասցեում գտնվող առեւտրի կենտրոնի առեւտրի իրականացման վայրի թիվ 6 պահեստային (սառնարան) տարածքը եւ, նույն պայմանագրի 2.4.3 կետի պահանջների համաձայն, ստանձնելով վարձակալած տարածքի անվտանգ շահագործման, հակահրդեհային եւ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման եւ իր մեղքով պատճառված վնասի դեպքում պատճառված վնասը փոխհատուցելու պարտավորությունները, խախտել է ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» եւ ՀՀ ներքին գործերի նախարարի՝ 2002 թվականի մայիսի 27-ի թիվ 241 հրամանով հաստատված՝ «Հրագործական արտադրատեսակները պահելու եւ դրանք զանգվածային միջոցառումների ժամանակ օգտագործելու» պահանջները, որի հետեւանքով 2022 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, տեղի է ունեցել պայթյուն, ինչի հետեւանքով անզգուշությամբ կյանքից զրկվել են ընդհանուր 17 անձինք, ինչպես նաեւ առաջացել են այլ ծանր հետեւանքներ:

Մեր Մարգարյանը, հանդիսանալով Վահագն Հովհաննիսյանի ընկերը, վերջինի կողմից առեւտրի տարածքում Վահագն Հովհաննիսյանի եւ Գարիկ Վարդանյանի հետ համատեղ պահեստավորել է հրագործական արտադրատեսակներ՝ այդկերպ դրսեւորելով հանցավոր անփութություն:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԻՆՔՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հերթական ինքնասպանության փորձն է կանխվել:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ԱՆ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում բուժվող, 1990 թվականին ծնված աղջիկը՝ Սոսաննա.Թ-ն, փորձել է վերջ տալ կյանքին:

Մեզ հայտնի դարձավ, որ նա պարանոցին թել կապելու միջոցով է փորձել ինքնասպան լինել, սակայն աշխատակիցները տեսել ու կանգնեցրել են նրան:

ՄԱՀ՝ ՑՈՒԼԻ ՀԱՐՎԱԾԻՑ

Օգոստոսի 30-ին առեղծվածային դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 20:00-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Հրազդանի բաժին ահազանգ է ստացվել Կոտայքի մարզի բնակիչ, 65-ամյա Հայկ Պ.-ից, որը հայտնել է, որ իրենց նախրապան, Կոտայքի մարզի բնակիչ, 57-ամյա Մերուժան Հ.-ի հետ կապ հաստատել չի լինում, մինչդեռ նախիրը վերադարձել է առանց նրա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ահազանգով դեպքի վայր է մեկնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Հրազդանի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Զորիկ Ավդիշոեւի գլխավորությամբ:

Ժամանել է Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ Մերուժան Հ.-ն առավոտյան դուրս է եկել խոշոր եղջերավոր անասուններին արածեցնելու նպատակով, իսկ երեկոյան անասուններին վերադարձնելու ժամանակ ինքը չի վերադարձել:

Նրա քրոջ որդին, տեսնելով, որ քեռին տուն չի վերադարձել, ժամը 19:30-ի սահմաններում սկսել է որոնողական աշխատանքներ կատարել եւ Կոճոռ թաղամասի «Հին այգիներ» կոչվող հատվածում հայտնաբերել է նրա դին՝ գետնին պառկած վիճակում:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ կրծքավանդակի եւ ոտքերի շրջանում հայտնաբերվել են վնասվածքներ՝ վերքերի տեսքով, որն էլ, ըստ Վրեժ Չ.-ի հայտնածի, առաջացել են ցուլի հարվածներից:

Դեպքի փաստով Կոտայքի մարզային քննչական վարչությունում սպանություն հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քննիչի որոշմամբ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԾԵԾ

Օգոստոսի 29-ին՝ գիշերվա ժամը 2-ի սահմաններում, Իջեւան քաղաքում տղամարդը գիշերով ջարդել է Բլբուլյան փողոցի միջնամասում գտնվող բնակարանի լուսամուտի ապակին, ներխուժել բնակարան, ուր միայնակ ապրում է ռուսերենի 82-ամյա ուսուցչուհին: Ուսուցչուհին ամուսնացած չէ, զավակներ չունի, տարիներ առաջ անցել է կենսաթոշակի: Տղամարդու ներխուժման ժամանակ ծեր կինն անկողնում պառկած է եղել, տղամարդը փորձել է բռնաբարել կնոջը, սակայն դիմադրության հանդիպելով՝ ծեծել է նրան՝ բազում հարվածներ հասցնելով դեմքին եւ մարմնի տարբեր մասերին: Իր կամքից անկախ հանգամանքների պատճառով իր ստոր նպատակին չհասնելով՝ տղամարդը փախուստի է դիմել: Իջեւան քաղաքից ստացված տեղեկություններով՝ բռնաբարության փորձ կատարածը նախկինում նույն հանցագործության համար դատապարտված, Իջեւան քաղաքի 36-ամյա բնակիչ Վազգեն Օհանյանն է, որը խոստովանել է իր կատարած հանցանքը: Նա ձերբակալվել է: Վազգեն Օհանյանը շուրջ 12 տարի առաջ՝ 2011 թվականի հոկտեմբերի 30-ին՝ գիշերը ժամը 03.00-ի սահմաններում, բաց դռնից մուտք է գործել Իջեւան քաղաքի Այգեստան փողոցի տներից մեկը եւ փորձել բռնաբարել 69-ամյա կենսաթոշակառու Սուսաննա Բեկնազարյանին: Վերջինս սկսել է բղավել, օգնության կանչել, ինչից հետո Սուսաննայի սենյակ է մտել նրա թոռը՝ 19-ամյա Գարուշ Խաչատրյանը, դրանից հետո Վազգեն Օհանյանը դիմել է փախուստի: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ՝ Վ. Օհանյանն այդ հանցագործության համար ազատազրկվել է 2 տարի 8 ամիս ժամկետով: Օգոստոսի 29-ին ծեծված ուսուցչուհին այժմ բուժում է ստանում Իջեւանի բժշկական կենտրոնում: Իջեւան քաղաքում տեղեկություն է տարածվել, թե ծեր, ծեծված ուսուցչուհին մահացել է, սակայն այդ լուրը կեղծ է:

ԸՆԴԴԵՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն օգոստոսի 4-ի իր որոշմամբ ստեղծել է Իջեւան համայնքում փողոցային առեւտրի ուսումնասիրման եւ կանխարգելման նպատակով հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են Տավուշի մարզպետարանի ու Իջեւանի համայնքապետարանի պաշտոնյաներ եւ ոստիկանության Իջեւանի բաժնի ՀՕԲ-ի պետ Անդրանիկ Թելոյանը (իր համաձայնությամբ): Մարզպետն այդ հանձնաժողովին հանձնարարական է տվել ոսումնասիրել, միջոցներ ձեռնարկել փողոցային առեւտուրը կանխարգելելու եւ վերացնելու համար: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը որպես մարզպետ պաշտոնավարելուց երկուսուկես տարի հետո է տեսել իր հայրենի Իջեւան քաղաքում եւ Իջեւան համայնքի այլ բնակավայրերում կատարվող փողոցային առեւտուրը, որ համապատասխան հանձնաժողով է ստեղծել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԳՈՐԾԻ

ՆՈՐ ՃԱՇԱՐԱՆ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հարեւանությամբ սեպտեմբերի 1-ին կբացվի երկրորդ սոցիալական-բարեգործական ճաշարանը: Այն գործելու է շրջափակման հետեւանքով աշխատանքը դադարեցրած «Մալիբու» մանկական սրճարանի տարածքում: Այս մասին հաղորդագրություն են տարածել «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժումը եւ «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը:

Առաջին ճաշարանը բացվել էր օգոստոսի 15-ին Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու մայր տաճարի հարեւանությամբ: Օրական այնտեղ սնվում է 300-350 մարդ, հիմնականում՝ անչափահասներ եւ տարեցներ: Բացի այդ, կամավորները պատրաստված ուտելիքն ամեն օր հասցնում են 70-ից ավելի տարեցների եւ հաշմանդամների:

Ինչպես առաջին ճաշարանի, այնպես էլ երկրորդի պարագայում հանրային սննդի ծառայության գնման պայմանագիր է կնքվել մասնագիտացված մասնավոր ընկերության հետ:

«Առաջին ճաշարանը երկու շաբաթից ավելի է գործում, եւ, ցավոք, տեսնում ենք, որ այն մեծ պահանջարկ ունի: Լիակատար շրջափակման պայմաններում մեզ համար դժվար էր բացել երկրորդ ճաշարանը, բայց հասկացանք, որ այս իրավիճակում սա ամենակարեւոր ծրագիրն է, ու ամեն ինչ փորձեցինք անել երկրորդ կետը բացելու համար: Կարողացանք գտնել մասնավոր ընկերություններ, որոնք մթերում են իրականացնում նաեւ գյուղերից: Ցավոք, այս իրավիճակում մենք չենք կարող ասել, թե այս ճաշարաններն ինչքան կգործեն: Թերեւս կգործեն այնքան, ինչքան որ կհաջողվի մթերք ստանալ»,- ասել է «Մենք ենք մեր սարերը» գործակալության սոցիալական ծրագրերի ղեկավար Արմեն Մանգասարյանը:

Սոցիալական ճաշարանները, բացի հիմնական նպատակից՝ շրջափակման հետեւանքով բնակչության առավել տուժած խմբերին սննդով ապահովելուց, նաեւ հոգեբանական նշանակություն ունեն: Դրանց միջոցով ստեղծում է նաեւ շփման միջավայր՝ թույլ չտալով մարդկանց պարփակվել: Եկեղեցիների հարեւանությամբ բացելու նպատակն այն է, որ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են նաեւ հոգեւորականների հանդիպումները բնակչության հետ: Բացի այդ, երկու եկեղեցիները գտնվում են քաղաքի տարբեր հատվածներում, եւ քաղաքի մի ծայրից երեխաներն ու տարեցները ստիպված չեն լինի ոտքով հասնել քաղաքի մյուս ծայրը:

Ճաշարանն այցելուներին սպասարկելու է ժամը 13.00-15.00-ի հատվածում: Ծրագրի շահառու կարող են դառնալ մինչեւ 16 տարեկան երեխաներն ու նրանց ուղեկցողները, ինչպես նաեւ հղի կանայք ու 65 տարեկանից բարձր անձինք:

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը շրջափակման մեջ է պահում Արցախը: Մինչեւ 2023 թվականի հունիսի 15-ը Բերձորի (Լաչինի) միջանցքով հնարավոր էր լինում Ռուսական խաղաղապահ զորակազմի եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ քիչ քանակությամբ հումանիտար բեռներ ստանալ: 2023թ. հունիսի 15-ից հետո Ադրբեջանն իսպառ արգելել է բեռնափոխադրումները՝ Արցախը պահելով լիակատար պաշարման մեջ եւ ստեղծելով հումանիտար ճգնաժամ: Այս իրավիճակում «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժումը եւ «Մենք ենք մեր սարերը» գործակալությունը ստիպված են եղել դադարեցնել ենթակառուցվածքային մի շարք ծրագրեր եւ նախաձեռնել հրատապ ծրագրեր, որոնք այս ծանր իրավիճակում կօգնեն մեղմել արցախահայության խնդիրները:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

«ՎՏԲ–ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿԸ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը հանդես է եկել որպես Newmag հրատարակչության գործընկեր, որը «Երազ» մանկական մատենաշարի շրջանակում հրատարակել է հայտնի հայ գրող, բանաստեղծ, դրամատուրգ, ԽՍՀՄ մշակույթի վաստակավոր գործիչ Սաղաթել Հարությունյանի «Ծիպիլին, Տիմբական եւ ծիծաղը» հեքիաթ-վիպակի նոր պատկերազարդ հրատարակությունը:

Առաջին անգամ «Ծիպիլին, Տիմբական եւ ծիծաղը» գիրքը տպագրվել է 1985 թվականին եւ անմիջապես դարձել երկրի փոքրիկ ընթերցասերների շրջանում ամենասիրված ստեղծագործություններից մեկը: Հեքիաթ-վիպակը մի քանի անգամ վերատպվել է հայերեն եւ ռուսերեն լեզուներով: Գրքի նոր պատկերազարդ հրատարակությունը հասանելի կլինի հանրապետության բոլոր գրախանութներում, ինչպես նաեւ այն կարելի է պատվիրել օնլայն:

««ՎՏԲ-Հայաստան» բանկի աշխատանքի նշանակալից ուղղություններից մեկը հանրապետությունում սոցիալական նախագծերին աջակցությունն է: Ուրախ ենք, որ Newmag հրատարակչության հետ համագործակցության շրջանակներում հնարավորություն ունենք մեր ներդրումն ունենալու երիտասարդ սերնդի զարգացման գործում: Այս յուրահատուկ եւ գունեղ գրքերը կդառնան մեր փոքրիկ ընթերցողների գրադարանների անբաժանելի մասը»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի Ժ/Պ Արա Ավագյանը:

«Գրքի ընտրությունը պատահական չէր. «Ծիպիլին, Տիմբական եւ ծիծաղը» հեքիաթ-վիպակը արդեն շուրջ 30 տարի շատ հայտնի է, եւ մենք որոշեցինք թարմացնել այն՝ գրքին համապատասխան ժամանակակից նկարազարդումներ մշակելով: «ՎՏԲ-Հայաստան» բանկի հետ համագործակցությամբ՝ սիրված հայ հեղինակի գրքի նոր հրատարակությունը կրկին հայտնի կդառնա երիտասարդ սերնդի շրջանում»,- նշեց Newmag հրատարակչության տնօրեն Արտակ Ալեքսանյանը:

ԱՌԱՔԻՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հիփոթեքային վարկերի պորտֆելի ծավալով շուրջ 6 տարի «Ամերիաբանկ»-ը պահպանում է բացարձակ առաջատարի դիրքը Հայաստանի բանկային համակարգում: 2023-ի 1-ին կիսամյակում «Ամերիաբանկ»-ի հիփոթեքային պորտֆելն աճել է ավելի քան 23 մլրդ դրամով՝ շուկայում առաջինը հատելով 200 մլրդ դրամի շեմը եւ 30.06.2023-ի դրությամբ կազմելով 209,6 մլրդ դրամ:

Նշենք, որ նույն ժամանակահատվածում «Ամերիաբանկ»-ի միջոցով առաջնային շուկայից գնված բնակարանների հիփոթեքային վարկերի ավելի քան 40%-ը տրամադրվել է օնլայն:

Հիշեցնենք, որ նախորդ տարի «Ամերիաբանկ»-ը գործարկել է Estate.ameriabank.am հարթակը, որը հնարավորություն է տալիս տուն գնելու ու վարկավորման ամբողջ ուղին անցնել օնլայն՝ կառուցապատողի ընտրությունից մինչեւ վարկի հաստատում: Ի դեպ, հարթակի միջոցով վարկի համար հնարավոր է դիմել նաեւ համավարկառուի հետ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ճՏՊ. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (1)

2023թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 12:00-ին Սեւակ Գալստյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձ Հարութ Գեւորգյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Արագածոտնի մարզ, գ. Ձորագլխում գտնվող 381.0 քմ մակերեսով արտադրական նշանակության հողամասը:

Մեկնարկային գինը սահմանվում է 436,500 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Սեւակ Գալստյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150004558048023 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (2)

2023թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 12:30-ին պարտապան Ա/Ձ Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 685,419 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487/:

ԱՎԵԼՅՈՒԿԱՅԻՆ ՔԱՀ

Կառավարության երեկվա նիստի ժամանակ ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը հայտարարեց, թե 7 տարեկան երեխաների շրջանում ամեն չորրորդն ավելցուկային քաշ ունի: Նա նշեց, որ աշխատանք է տարվում, որպեսզի երեխաները ցածր դասարաններից սովորեն առողջ ապրելակերպին: «Սա նշանակում է, որ ավելի շատ պետք է աշխատենք, սովորեցնենք, թե առողջ ափսեն ինչպես պետք է ձեւավորվի, զերծ պահենք մեր երեխաներին հեռուստատեսությամբ եւ այլ միջոցներով վնասակար ուտելիքի գովազդից»,- ասաց նախարարի տեղակալը:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՀԵՌԱՆԿԱՐ

S&P Global Ratings վարկանիշային գործակալությունը բարձրացրել է «Ամերիաբանկ»-ի՝ թողարկողի երկարաժամկետ վարկանիշը՝ սահմանելով այն BB-, իսկ հեռանկարը՝ «կայուն»: Միեւնույն ժամանակ գործակալությունը հաստատել է բանկի՝ թողարկողի կարճաժամկետ B վարկանիշը:

Նշենք, որ այս փոփոխությունը հաջորդել է Հայաստանի վարկանիշի բարելավմանը: Ըստ S&P գործակալության՝ «Ամերիաբանկ»-ի վարկանիշներն այլեւս սահմանափակված չեն սուվերենի վարկունակությամբ եւ այժմ համապատասխանում են սեփական վարկարժանության BB- գնահատականին:

Նշվում է, որ «Ամերիաբանկ»-ն ունի մեծ հնարավորություն՝ պահպանելու իր առաջատար դիրքը Հայաստանում (այն ամենախոշոր վարկային հաստատությունն է շուկայում՝ 2023թ. հունիսի 30-ի դրությամբ շուկայի շուրջ 19% մասնաբաժնով)՝ օգտագործելով իր թվային կապուղիները եւ ավելի դիվերսիֆիկացնելով մանրածախ եւ ՓՄՁ պորտֆելները: S&P-ն նաեւ ակնկալում է, որ ներքին կապիտալի ստեղծման բարձր ցուցանիշների շնորհիվ առաջիկա տարիներին «Ամերիաբանկ»-ը կպահպանի կապիտալի համարժեքության բավարար մակարդակ:

Կայուն հեռանկարն արտացոլում է գործակալության այն տեսակետը, որ առաջիկա 12-18 ամիսների ընթացքում «Ամերիաբանկ»-ը կպահպանի իր առաջատար դիրքերը Հայաստանի բանկային համակարգում եւ կկառավարի վարկավորման ակնկալվող բարձր աճը՝ միաժամանակ պահպանելով կապիտալի կայուն բուֆերները:

«Ամերիաբանկ»-ի մասին

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների եւ անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային եւ ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով՝ Estate.ameriabank.am, Automarket.ameriabank.am, Business.ameriabank.am:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի եւ անվտանգ ֆինանսական տեխնոլոգիաների միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

«Ամերիաբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը օգոստոսի 31-ի նիստում հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի միջեւ 2023 թվականի ապրիլի 27-ին Բրյուսելում եւ 2023 թվականի օգոստոսի 1-ին Երեւանում ստորագրված «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» ֆինանսավորման համաձայնագրին:

Այդ համաձայնագրով ԵՄ-ն Հայաստանին կտրամադրի դրամաշնորհային հիմունքներով բյուջետային աջակցություն՝ 29.3 մլն եվրո ծավալով: Բացի այդ, ծրագրի իրականացմանն օժանդակելու նպատակով կտրամադրվի լրացուցիչ տեխնիկական աջակցություն՝ 2.7 մլն եվրո ծավալով (ծրագրի ընդհանուր արժեքը՝ 32 մլն եվրո): Հայաստանի Հանրապետության կողմից համաֆինանսավորում չի նախատեսվում:

Նշենք, որ ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի կրթական համակարգի մրցունակությունը՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով սահմանված կրթական բարեփոխումներին, ինչպես նաեւ ՀՀ կրթության մինչեւ 2030թ. զարգացման պետական ծրագրին ու դրանից բխող գործողությունների ծրագրին համահունչ: Նախանշված բարեփոխումների իրականացման հարցում ծրագիրն օժանդակություն է տրամադրելու քաղաքականության վերաբերյալ ընդլայնված երկխոսության, ֆինանսավորման ու տեխնիկական աջակցության տրամադրման ճանապարհով:

Ծրագիրը, մասնավորապես, կենտրոնացված է լինելու ԳՏՃՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) առարկաների դասավանդման եւ ուսուցման որակի բարելավման վրա՝ համադրելով ֆորմալ ու նորարարական ոչ ֆորմալ կրթությունը, գյուղական համայնքներում բարձրորակ կրթական ծառայություններն ավելի մատչելի դարձնելու համար:

Հավելենք, որ ծրագիրը միտված է ավելացնելու գյուղական տարածքներում բարձրորակ միջնակարգ կրթության ծառայություններին մասնակցող աշակերտների (հատկապես՝ աղջիկների) թիվը եւ բարելավելու միջնակարգ կրթության համակարգի կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը:

Ծրագիրն ընդգրկելու է Արարատի, Կոտայքի ու Գեղարքունիքի բոլոր դպրոցներն ու Սյունիքի մարզի Կապան քաղաքի 13 դպրոցները: Ընդհանուր առմամբ, մինչեւ 337 դպրոց ունենալու է վերանորոգված ու կահավորված ԳՏՃՄ լաբորատորիաներ, վերապատրաստված ուսուցիչներ եւ վերապատրաստման նորացված մեթոդաբանություն:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Արարատի մարզ, համայնք Մխչյան, 18-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 45,5 ք.մ. բնակելի տուն, 24,1 քմ ծածկ եւ 0,11823 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12080000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 18.09.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29?12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ գրավառուի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար գրավառուն որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

SADA–Ն՝ Google Cloud–Ի ԳՈՐԾԸՆԿԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ բիզնեսի եւ տեխնոլոգիական խորհրդատու, Google Cloud-ի մրցանակակիր գործընկեր SADA-ն ճանաչվել է Google Cloud-ի 2023-ի Համաշխարհային վաճառքի տարվա գործընկեր:

Արդեն վեց տարի անընդմեջ ընկերությունը պարգեւատրվում է Google Cloud էկոհամակարգում իր ձեռքբերումների, փորձի եւ այլ ծառայություններ մատուցելու համար: Հաջողության հասնելով տարբեր ոլորտներում՝ ներառյալ առողջապահության, մեդիայի, ժամանցի, մանրածախ առեւտրի, արտադրության եւ հանրային ոլորտում՝ SADA-ն հավատարիմ է «հաճախորդ ամբողջ կյանքի ընթացքում» մոտեցմանը եւ աջակցում է հաճախորդներին իրենց ամպային վերափոխման ճանապարհին:

Նշենք, որ վերջին տարվա ընթացքում SADA-ն շարունակել է տրամադրել փորձագիտական ամպային խորհրդատվական եւ տեխնիկական, ինչպես նաեւ պրոֆեսիոնալ եւ կառավարման ծառայություններ համաշխարհային բրենդներին աջակցելու համար, որոնք ավելանում էին իր աճող բազային: SADA-ի համագործակցությունը ներառում է այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Digital Turbine-ը, WeWork-ը, AccuWeather-ը, Evite-ը, Sony Picture Imageworks-ը, Colgate-Palmolive-ը եւ այլն: Միայն 2022-ին SADA-ի պորտֆոլիոն համալրվել է 566 նոր հաճախորդով: Ընկերությունը նաեւ ընդլայնել է իր SaaS Alliance ծրագիրը՝ներառելով այնպիսի գործընկերների, ինչպիսիք են Onna Technologies-ը, New Relic-ը, ScyllaDB-ը, Alteryx-ը եւ այլն:

«Մեզ համար մեծ պատիվ է եւս մեկ անգամ ճանաչվել Google Cloud-ի Համաշխարհային վաճառքի տարվա գործընկեր: Գերազանց ծառայություններ մատուցելու հաստատուն հանձնառությունը Google Cloud-ի մեր տեխնիկական փորձագետների եւ ջատագովների հետ միասին կարեւոր է մեր ընկերության եւ հաճախորդների հաջողության համար: Կշարունակենք մեր նվիրված աշխատանքը՝ օգնելու փոխակերպելու իրենց բիզնեսները եւ իրականացնելու ամենահամարձակ հավակնությունները, լավագույն ամպային հարթակի եւ լավագույն լուծումների միջոցով»,- նշել է SADA-ի նախագահ եւ գործադիր տնօրեն Թոնի Սաֆոյանը:

Հավելենք, որ 2022-ին SADA-ն ընդլայնել է իր գլոբալ ներկայացվածությունը հաճախորդների աճող պահանջարկը բարելավելու համար՝ ավելացնելով վաճառքի եւ մատակարարման թիմեր Մեծ Բրիտանիայում եւ Իռլանդիայում: Վաճառքներ իրականացնելու նպատակով SADA-ն նաեւ ընդլայնել է գրասենյակները Հնդկաստանում եւ Հայաստանում՝ի լրումն մատակարարման եւ գործառնական հիմնական գործառույթների: Բացի դրանից, SADA-ն դարձել է աշխարհի հինգ ընկերություններից մեկը, որը վաստակել է Տվյալների կենտրոնի արդիականացման մասնագիտացումը՝ հաջողությամբ հաճախորդների հետ աշխատելով Google Cloud Expertise-ի ավելի քան 30 անվանակարգերում: Նշենք, որ սա ընկերության Google Cloud Partner Advantage ծրագրի 10-րդ մասնագիտացումն է:

SADA-ն պրոֆեսիոնալ ծառայությունների շուկայի առաջատար է եւ Google Cloud-ի լուծումների մատակարար մրցանակակիր ընկերություն: 2000-ից սկսած՝ SADA-ի փորձագետների թիմը պատրաստակամորեն օգնում է առողջապահության, մեդիայի, ժամանցի, մանրածախ առեւտրի, արտադրության եւ հանրային ոլորտի հաճախորդներին՝ լուծելու իրենց առջեւ ծառացած ամենաբարդ խնդիրները, որպեսզի նրանք կարողանան կենտրոնանալ իրենց նպատակների իրականացման վրա: Ունենալով վաճառքի եւ հաճախորդների աջակցության թիմեր Հյուսիսային Ամերիկայի, Հնդկաստանի եւ Հայաստանի գրասենյակներում՝ SADA-ն ամենուր մոտ է իր հաճախորդներին իրենց թվային փոխակերպման ճանապարհին: SADA-ն Google Cloud-ի Տարվա գործընկեր է ճանաչվել վեց տարի անընդմեջ, ունի Google Cloud-ի 10 մասնագիտացում եւ հաճախորդներին սպասարկելու լավագույն փորձ: Տասնհինգ տարի շարունակ ընդգրկվել է Inc. ամսագրի ԱՄՆ ամենաարագ աճող 5000 մասնավոր ընկերությունների եւ չորս տարի անընդմեջ՝ Inc.-ի Ամերիկայի լավագույն աշխատատեղերի ցուցակներում:

ԱՇԽԱՐՀ

ՏԻԿՆԻԶՅԱՆՆ ՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ

Մոսկվայի «Լոկոմոտիվի» եւ Հայաստանի հավաքականի 24-ամյա պաշտպան Նաիր Տիկնիզյանը այս տրանսֆերային պատուհանի ժամանակ չի հեռանա Ռուսաստանից: Այդ մասին հայ ֆուտբոլիստը հայտնել է Sport-express.ru-ի հետ զրույցում:

«Իմ մասին տարբեր խոսակցություններին չեմ հետեւում: Եթե ակումբի ղեկավարությունն ասում է, որ մնում եմ, նշանակում է՝ մնում եմ: Ես այդ ամենից առավելագույն կտրում եմ ինձ: Եթե լինի հստակ առաջարկ, կխոսենք:

Եվրոպայում խաղալը երազանք է, բայց ոչ այս տրանսֆերային պատուհանի ժամանակ: Հույս ունեմ՝ հաջորդ տրանսֆերային պատուհանի ժամանակ կտեղափոխվեմ: Կշարունակեմ աշխատանքը, կանեմ հնարավոր առավելագույնը»,- ասել է Նաիր Տիկնիզյանը:

Ընթացիկ մրցաշրջանում Տիկնիզյանը «Լոկոմոտիվի» հետ մասնակցել է 9 հանդիպման, խփել է 4 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում:

ԿՀԵՌԱՆԱ ԱՍՊԱՐԵԶԻՑ

Ռեփեր Տիմատին շարունակում է ընդլայնել իր բիզնես կայսրությունը: Ընդամենը մեկ տարի առաջ կատարողն Անտոն Պինսկու հետ ներկայացրեց Stars Coffee-ն՝ Starbucks-ի թարմացված տարբերակը, որը լքեց Ռուսաստանը, եւ այս ընթացքում նրանք երկրում բացեցին ավելի քան 60 վաճառակետ: Այսօր ձեռնարկատերերը ներկայացրել են Domino's Pizza պիցերիաների նորացված ցանցի նախագիծը: «Domino Pizza»-ի (ցանցի նոր անվանումը) առաջին կետի բացման ժամանակ Super-ը պարզել է նոր նախագծի բոլոր մանրամասներն ու միեւնույն ժամանակ հարցրել է արտիստին, թե արդյոք իր ստեղծագործության երկրպագուները պետք է սպասեն ռեփերի վերադարձին բեմ:

Տիմատիի խոսքով՝ իր համար դժվար է համեմատել երաժշտական ոլորտն ու աշխատել բիզնես նախագծերի վրա: Նա փիլիսոփայորեն է վերաբերում գործունեության տեսակը փոխելուն. նա ցանկանում է ժամանակ ունենալ կյանքը տարբեր տեսանկյուններից զգալու համար:

«Ես իսկապես սիրում եմ երաժշտությունը, պրոդյուսերական ու գեղարվեստական գործունեությունը. ես դրա վրա ծախսել եմ կյանքիս վերջին 25 տարին: Մեծ հաճույքով հանդես կգամ եւ՛ մեծ, եւ՛ փոքր բեմ (հարսանիք): Ես չեմ ուզում մեկ գործով զբաղվել: Ոչ ոք չգիտի, թե որքան ժամանակ ունենք, կյանքը կարճ է, մենք ուզում ենք տարբեր ուղղություններ փորձել: Դե, ես չէի ցանկանա մեկնել հյուրախաղերի, երբ 50, 60 տարեկան լինեմ: Իսկ ես արդեն 40 եմ», - ասել է Տիմատին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Դիլիջանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր, հավաստագրեր (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար՝3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 14.09.2023թ. ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 20.09.2023թ. ժամը 12:30-ին Դիլիջանի ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 61:

Տեղեկությունների համար զանգահարել (0268) 2-74-31, (099) 09-01-53 հեռախոսահամարներով:

● *Սեպտեմբերի 9-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Անտանիք ընտանիք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Լիլիթ Հախնազարյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է՝ ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում: Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

ՀԱՐՑ. Արցախում ե՞րբ է կենսաթոշակը վճարվում լիազորագրով:

Դոնարա Էլոյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակը կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված եւ նոտարի վավերացրած լիազորագրով վճարվում է, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը եւ լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում:

ՀՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ձինվորական ուսումնական հաստատությունում սովորող, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է) նաեւ տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ֆուտբոլիստ Գեւորգ Ղազարյանը թողնում է կարիերան 17 տարի մարզադաշտում անցկացնելուց, բազմաթիվ հուզիչ ու լարված պահեր ունենալուց, ֆուտբոլային լարված տասնյակ հանդիպումներ հետեւում թողնելուց հետո:

Նա հրաժեշտի ուղերձ է հրապարակել՝ խոսելով անցած ուղու, ձեռքբերումների ու հիասթափությունների, նվաճումների ու հպարտության մասին: Ղազարյանը հրաժեշտի մասին խոսելիս չի կարողանում զսպել հուզմունքն ու արտասվում է, այնուհետ նշում, որ արդեն ֆուտբոլով է զբաղվում իր որդին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 9 + 13 +26 + 29
	Կոտայքի լեռներ	+ 9 + 12 +26 + 29
	Կոտայքի նախալեռներ	+17 + 19 +27 + 29
	Գեղարքունիք	+10 + 14 +21 + 24
	Լոռի	+8 + 12 +21 + 26
	Տավուշ	+12 + 16 +25 + 28
	Արագածոտնի լեռներ	+9 + 12 +25 + 28
	Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +27 + 31

	Արարատ	+18 + 21 +32 + 34
	Արմավիր	+17 + 19 +32 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +24 + 26
	Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +32 + 34
	Սյունիքի հովիտներ	+17 + 21 +26 + 30
	Սյունիքի նախալեռներ	+12 + 14 +22 + 25
	ԼՂՀ	+17 + 19 +26 + 30
	Երեւան	+19 + 21 +32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.8.2023**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*